ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 51-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի և դրա հետ փոխկապակցված՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2021 թվականի հուլիսի 13-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) դիմումը՝ թիվ ԱՐԴ/0002/13/21 դատական գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» 2021 թվականի հունիսի 29-ի որոշումը: Հիշյալ որոշմամբ Դատարանը խնդրել է. ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածը և դրա հետ փոխկապակցված՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հոդվածն այնքանով, որքանով չեն նախատեսում քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձանց նկատմամբ տուգանքի ձևով պատժի կատարումն ազատությունից զրկելու հետ

կապված պատժի կրման ժամկետով կասեցնելու հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 78-րդ հոդվածին հակասող:

2. Դիմողի պնդմամբ գործող օրենսդրությամբ դատապարտյալի համար որևէ «արտոնյալ» իրավառեժիմ նախատեսված չէ այն դեպքերում, երբ նրա նկատմամբ միաժամանակ նշանակվել է ազատությունից զրկելու և տուգանքի ձևով պատիժ: Անկախ հանգամանքից, թե դատապարտյալը տվյալ պահին կրում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ, թե՝ ոչ, նա պարտավոր է սահմանված ժամկետում վճարել իր նկատմամբ նշանակված տուգանքը, հակառակ պարագայում վերջինիս համար առաջանում են իրավական անբարենպաստ հետևանքներ, այն է՝ տուգանքը փոխարինվում է հանրային աշխատանքներով: Ավելին, հանրային աշխատանքների ձևով պատժատեսակը կրկին տուգանքով փոխարինելու կառուցակարգ նախատեսված չէ՝ անկախ դատապարտյալի՝ տուգանքը վճարելու պատրաստակամությունից:

Դիմողը նշում է, որ քրեակատարողական հիմնարկում պահվող անձը, որպես կանոն, զրկված է տուգանքի ձևով պատիժ կրելու (տուգանքը վճարելու) իրական և ողջամիտ հնարավորությունից, որպիսի պայմաններում դատապարտյալի իրավավիճակը էականորեն վատթարանում է:

Պատճառաբանելով, որ քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի նկատմամբ նշանակված տուգանքի ձևով պատիժը հանրային աշխատանքներով փոխարինելու կառուցակարգը պիտանի և անհրաժեշտ չէ հետապնդվող նպատակին հասնելու համար, և որ նույն նպատակին հնարավոր է հասնել դատապարտյալի իրավունքների նկատմամբ նվազ միջամտությամբ՝ դատարանը որոշել է դիմել Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածը և դրա հետ փոխկապակցված՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հոդվածն այնքանով, որքանով չեն նախատեսում քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձանց նկատմամբ տուգանքի ձևով պատժի կատարումն ազատությունից զրկելու հետ

կապված պատժի կրման ժամկետով կասեցնելու հնարավորություն, Սահմանադրության 78-րդ հոդվածին հակասող ճանաչելու խնդրանքով:

3. Ուսումնասիրելով ներկայացված դիմումը (Դատարանի որոշումը)՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմք, որպիսի պայմաններում սույն գործի քննությունը **ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումից բխում է, որ դատարանը դատական գործի վարույթը կասեցնելու դեպքում հիշատակված հոդվածով նախատեսված դիմումը կարող է ներկայացնել վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ **եռօրյա ժամկետում:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 4-րդ գլխով սահմանվում են Սահմանադրական դատարան դիմելու ընդհանուր կանոնները, որոնք պարտադիր են Սահմանադրական դատարան դիմող **բոլոր սուբյեկտների**, այդ թվում՝ դատարանի համար: Նույն գլխով կանոնակարգվում են նաև գործի քննությունը մերժելու (29-րդ հոդված) հետ կապված հարցերը:

Օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանել է, որ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան: Քննության առարկա դիմումը չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջը, մասնավորապես՝ Դատարանը թիվ ԱՐԴ/0002/13/21 դատական գործի վարույթը կասեցրել է 2021 թվականի հունիսի 29-ին կայացրած «Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշմամբ, մինչդեռ սույն որոշումը

Սահմանադրական դատարան է ուղարկվել միայն 2021 թվականի հուլիսի 7-ին (ուղեկցական գրության ստորագրության ամսաթիվը), որը Սահմանադրական դատարան է մուտքագրվել սույն թվականի հուլիսի 13-ին: Նման պայմաններում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմող Դատարանը չի պահպանել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եռօրյա ժամկետը և, հետևաբար՝ հիշյալ ժամկետից դուրս իրավասու չէ դիմել Սահմանադրական դատարան:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 71-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի և դրա հետ փոխկապակցված՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

27 հուլիսի 2021 թվականի
ՍԴԱՈ-166